

ՀԱՅ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ
ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ*

Հասմիկ Գրիգորյան

Բանալի բառեր՝ սահմանադրություն, սահմանադրականություն, ժողովրդավա-
րություն, ազգային, արդարություն, իշխանություն, իրավական պետություն:

Սահմանադրականությունը որպես ուսմունք սահմանադրության և հանրային քա-
ղաքական իշխանության կազմակերպման ժողովրդավարական սկզբունքների մասին,
որպես կանոն ծնունդ է նոր ժամանակաշրջանի, առնչվում է բոլորուադեմոկրատա-
կան հեղափոխությունների հետ: Միաժամանակ կարելի է նշել, որ սահմանադրությու-
նը մարմնավորում է մարդկային հասարակության 2 հիմնարար սկզբունքներ՝

1. Հաստատում է իշխանական գործառույթների իրականացման մեխանիզմներն
ու ընթացակարգերը:

2. Որոշում և ամրագրում է գերազույն պետական իշխանության կիրառման և ան-
ձի քաղաքական, տնտեսական և սոցիալական ազատության ոլորտների միջև իրավա-
բանական սահմանները:

Իր ծագմամբ «սահմանադրականություն» հասկացությունը պարտական է ամե-
րիկյան քաղաքական-իրավական մոտքին: ԱՄՆ-ի 1787 թվականի Սահմանադրության
հիմնադիրները դրանով նշեցին ամրագրված սահմանադրության գերազանցությունը օ-
րենքների և այլ իրավական ակտերի նկատմամբ: [1]

Պետք է նկատել նաև, որ սահմանադրականության երաշխավորման տեսանկյու-
նից բավականին լուրջ և արդյունավետ մոտեցում էին որդեգրել Ֆրանսիայում: Այս-
պես՝ 1789 թվականի օգոստոսի 26-ին մարդու և քաղաքացու իրավունքների ֆրան-
սիական հոչակագրի 16-րդ հոդվածում ամրագրվեց, որ «Յուրաքանչյուր հասարա-
կություն, որտեղ ապահովված չէ իրավունքների երաշխավորմը և հաստատված չէ
իշխանությունների բաժանումը, ընդհանրապես չունի սահմանադրություն»: [2] Հետա-
գայում իրավաբանական և այլ հետազոտություններում «սահմանադրություն» հասկա-
ցությունը ստանում է առավել լայն նշանակություն, սկսում կիրարվել տարբեր պե-
տությունների հասարակական կառուցվածքի ժողովրդավարական բնութագրման հա-
մար:

Իրավաբանական գրականության մեջ նշված չէ սահմանադրականության էության
և հայեցակարգային զարգացման, ինչպես նաև կոնկրետ և սպառչի հատկանիշներով
բնութագրելու վերաբերյալ միասնական մոտեցում:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրված է, որ Սահ-
մանադրությունը պետության օրենսդրության իրավական հիմքն է, ունի բարձրագույն
իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: [3] Այն սահմա-
նում է պետության հիմնական մարմինների (օրենսդիր, գործադիր և դատական)՝
ստեղծման եղանակը, նրանց փոխհարաբերությունները, լիազորությունների շրջանա-
կը, անհատի իրավունքներն ու պարտականությունները, իշխանության մարմինների
կազմավորման, գործունեության կարգը, ընտրական համակարգի սկզբունքները, պե-
տական գործունեության մեջ քաղաքացիների մասնակցության կարգը, այսինքն՝ տվյալ

* Հոդվածն ընդունվել է 26.02.18:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՄՄՀ իրավագիտության ամբիոնը:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Երկրի քաղաքական, իրավական և տնտեսական հիմունքները և արտացոլում է սոցիալական տարբեր խափերի ու քաղաքական ուժերի հարաբերակցությունն այն ընդունելու պահին:

«Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: [4]

Պետություն դաշնայլու միակ գրավականը սահմանադրությունն է, այն էլ միայն այն դեպքում, եթե դու ապրում ես դրանում ամրագրված սահմանափակուններով:

Սահմանադրականության հասկացությունը ուղղակիորեն կապված է իրական, փաստացի սահմանադրության հետ: Նշված դիրքորոշման լույսի ներքո հատկապես արդիական է պրոֆեսոր Գ. Հարությունյանի մոտեցումը «Սահմանադրությունից մինչև սահմանադրականություն ճանապարհը չի ավարտվում երկրի հիմնական օրենքի ընդունումով, անցումային դրույթներով նախատեսված ինչ-ինչ նախապատրաստական քայլերով, ամրաժեշտ ինստիտուտների ու կառույցների ձևավորումով, մարդու իրավունքներն ու ազատությունները Սահմանադրության մեջ ամրագրելով»[5]: Այսինքն ինքնին Սահմանադրության առկայությունը չի ենթադրում սահմանադրականության հաստատում կամ դրա առկայությունը:

Գրիգոր Թանանյանը նշում է, որ Եվրոպական լեզուներում «constitution» նշանակում է կազմություն, կազմակերպում, մարմինների կազմվածք, որն իսկապես լիովին համապատասխանում է սահմանադրության վերոհիշյալ բնութագրմանը: [6]

Այս առումով, սակայն, հայերեն անվանումը դուրս է ընդհանուր շարքից: Սահմանադրություն նշանակում է սահմանել կամ սահման դնել:

Սահմանադրություն տերմինի առաջացումն ու կիրառումն ավելի վաղ պատմություն ունի: Մեծ հայունի առաջին օրենքների ժողովածուն շումերական պետության թագավոր Ռիթ-Նամայի ժողովածուն է (մ.թ.ա. 3-րդ հազարամյակ): Նշված ժամանակաշրջանում է, որ աշխատանքներ են կատարվում օրենսդրության և դատական պրակտիկայի համակարգման ուղղությամբ: Այդ նոյն ժամանակաշրջանում համակարգված օրենսդրություն է ունեցել նաև Եգիպտոսը (Համուրապիի օրենքները), Հնդկաստանը (Մանուի օրենքները) և այլ ստրկատիրական պետություններ: [7]

Սահմանադրություն արտահայտությունն առաջին անգամ օգտագործվել է մ. թ. ա. 4-րդ դարում հունական մեծ մտածող Արիստոտելի (384-322 մ.թ.ա.) կողմից: [8] Սակայն Արիստոտելի մոտ այն ուներ շատ նեղ, սահմանափակ իմաստ: Այս արտահայտությունը նա օգտագործում էր այն ժամանակ, երբ խոսք էր գնում պետության կառուցվածքի, պետական իշխանության արդյունավետ կազմակերպման, նրա ժողովրդավարական և արդարացի լինելու մասին:

Ինչպես հայ աշխարհիկ իրավունքին, այնպես էլ Եկեղեցական կամ կանոնական իրավունքին հայտնի էին «սահմանել», «սահմանը» և «սահմանադրություն» տերմինները:

Ազգային-Եկեղեցական ժողովների՝ Աշտիշատի (354), Շահապիվանի (444), Դվինի չորրորդ (648), հինգերորդ (719), Պարտապի (763), Սիսի (1243) կողմից ընդունվել են կանոնականքեր:

Մեծ հասած առաջին գրավոր կանոնական որոշումներից են Շահապիվանի ժողովի ընդունած կանոնները:

Հայտնի է, որ Հայաստանում ազգային-Եկեղեցական ժողովներին, սկսած 4-րդ դարի 50-60-ական թվականներից, մասնակցել են նաև աշխարհիկ տերերը: Ահա թե ինչու հայոց Եկեղեցական ժողովներն իրենց նշանակությամբ համագային քաղաքական հաստատություններ էին, քանզի այդ ժողովներում, ի թիվս Եկեղեցական-դավա-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

նաբանական հարցերի, ընդունում էին նաև աշխարհիկ օրենքներ, նորմեր, որոնք կարգավորում էին նաև աշխարհիկ հասարակական հարաբերությունները [9]:

Ծուրջ 1500 տարի առաջ հայ իրականության մեջ ասպարեզ է եկել ուշագրավ մի փաստաթուղթ, որն անվանվել է «Սահմանադրություն կանոնական»: Այն ընդունվել և հաստատվել է Մեծ Հայքի Ուտիք նահանգի Աղվեն քնակավայրում տեղի ունեցած ժողովում:[10]

Վաչագան Բարեպաշտի նախաձեռնությամբ ընդունվեց «Սահմանադրություն կանոնականը», որն իր նախապատրաստման և ընդունման եղանակով, հետապնդման նպատակներով և հասարակական հարաբերությունների կարգավորման առանձնահատկությամբ զգալի ընդհանրություններ ունի սահմանադրության վերաբերյալ ժամանակակից պատկերացումների հետ: [11]

Այդ սահմանադրության առանձնահատկությունն այն էր, որ դա ոչ թե մի հզոր իշխանակորի, թագավորի կամ քաջմակարող իմաստումի հեղինակած օրենքների ժողովածու էր, ինչպիսիք որ աշխարհում հայտնի էին մինչ այդ և դրանից հետո մինչև 18-րդ դարը, այլ ժողովորի բոլոր կարող ուժերի մասնակցությամբ ստեղծված բոլոր խավերի ներկայացուցիչների կողմից քննարկված և հավանության արժանացած հիմնավորապես նոր բնույթի փաստաթուղթ:

Պատմական իրողություն է, որ այդ սահմանադրության վրա կատարված աշխատանքն իրականացվել է բոլոր այն փուլերով, որոնք հաստուկ են ժամանակակից սահմանադրություններին ու օրենքներին ընդհանրապես ա) նախապատրաստական կամ նախագիծ մշակման բ) քննարկման գ) ընդունման փուլ:[12]

Նախապատրաստական փուլում Վաչագան թագավորը դիմում է Հայոց աշխարհի նշանակոր մարդկանց, խորհրդու հարցնում մրանցից, ստանում իրեն հուզող հարցերի վերաբերյալ դրական պատասխաններ:

Աշխատանքի երկրորդ փուլի իրականացումը կազմակերպվել է այնպիսի սկզբունքներով, որոնք շատ դարեր անց միայն արմատավորվեցին քաղաքակիրո աշխարհի տարբեր երկրների սահմանադրությունների ընդունման գործընթացում:

Արքան գումարել է Աշխարհաժողով: Սովոր Կաղանկատվացին նշում է. «Միարան ծնուվ, թագավորին ներկայանում և ժողովին մասնակցում են Պարտավի արքեպիսկոպոսը, թեմի բոլոր ազքի ընկնող հոգևորականները, ազնվական մարդիկ Արցախի նահապետները և այլ քաջմարթիվ մարդիկ»:[13]

Անհրաժեշտ է ընդգծել, որ հայ իրավունքի զարգացման պատմության մեջ համապետական կամ համընդհանուր համակարգված օրենքները երևան եկան զարգացած ֆեռալիզմի դարաշրջանում Հայաստանում (Մխիթար Գոշի «Դատաստանագիրը Հայոց» (1184թ.), Կիլիկյան հայկական թագավորությունում, Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրը» (1265թ.)): Դրանք շատ կարևոր իրավական ակտեր են: Բովանդակության իմաստով հայոց ազգային դատաստանագրքերը պարունակում էին ժամանակի համար բավական առաջադիմական նորմեր և գաղափարներ:

Այսպիսով սահմանադրականության առանձին գաղափարները քաջմադարյան պատմություն ունեն թե տերմինարանական և թե բովանդակային իմաստով, այն յուրահատուկ դրսնորումներ է ունեցել կախված տվյալ պատմական ժամանակաշրջանի քաղաքական, սոցիալական, գաղափարական, մշակութային, ազգային, կրոնական և այլ գործոններից:

Հայ եկեղեցական կանոնագրքերի, ինչպես նաև վաղնջական ժամանակներում սաղմանավորված սահմանադրական ու խորհրդարանական սովորույթների յուրովի ընդհանրացումը հանդիսացավ Հակոբ և Շահամիր Շահամիրյանների «Որոգայթ փա-

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

ռացը», որը ոչ միայն հայ իրականության մեջ, այլև աշխարհում առաջին սահմանադրական նախագիծն էր: Ինչպես նշում է իրավագիտության դոկտոր Գագիկ Հարությունյանը «Ծահամիրյանների այս աշխատությունը հասարակական-իրավական մտքի պատմության եզակի ձեռքբերումներից է, որում որոշակի համակարգով առաջադրված գաղափարները, տեսական խոր ընդհանրացումների արդյունք լինելուց բացի, միջազգային սահմանադրական զարգացումների անկյունաբարարային արժեք էն»:[14]

Ծահամիրյանը բարձրացրել և լուծել է այնպիսի իրավաքաղաքական խնդիրներ, որոնք մինչ այդ Եվրոպական մտածողների հայացքներում կամ չեն արտահայտվել, կամ էլ անվանարկվել են հպանցիկորեն: Այս տեսանկյունից «Որոգայթ փառացում»հիշարժան է իրավունքի փիլիսոփայության այնպիսի կարևոր խնդիրների քննարկումը, ինչպիսիք են իրավունքի, օրենքի և ազգային ազատագրական պայքարի փոխհարաբերությունը, որոնց գործնական արժեքը մեր ժողովրդի համար այսօր էլ չի կորցրել իր նշանակությունը:

«Որոգայթ փառացի» արժեքն ամբողջական կղառնա, եթե նկատենք նաև, որ դրա օրենսդրական նախագիծի 521-ից շուրջ 100 հոդվածները սահմանադրական իրավունքին են վերաբերում, որոնք գրվել են ԱՄՄ-ի սահմանադրությունից ավելի շուտ:[15]

«Որոգայթ փառաց»-ի երևան գալը նույնպես պայմանավորված էր հայ ազգային ազատագրական պայքարով և այդ պայքարը հիմնավորող գաղափարախոսությամբ:[16]

Ըստ Լեոի՝ Ծահամիրյանը գրքի մեջ հոդված առ հոդված բացատրում էր, թե ինչ վարչական ծև պիտի ունենա ազատագրված Հայաստանը: Նա նշում է: «Ուրեմն, հայկական մի մեծ սահմանադրություն, որի մեջ Ծահամիրյանը ծրագրում էր ռազմավար հանրապետական մի ռեժիմ պարամետրական ներկայացուցչությամբ, պատասխանատու մինհստրներով»:[17] Լեռն բարձր է գնահատում Ծահամիրյանի կատարած գործը:

Ազգային օրենսդրության ստեղծման համար Շ. Ծահամիրյանը ունեցել է բավարար հիմք: Նա կամեցել է Արցախի հինգ հայ մելիքությունների (որոնք պետական կազմավորումներ էին) տարածքի վրա ստեղծել համահայկական մի պետություն, որի ձեռքբերած տնտեսական և ռազմական հզորությունները հետագայում հնարավորություն պետք է տային ազատագրելու բովանդակ Հայաստանը:

Օրենքը դիտելով ժողովրդի կամքի արտահայտման ինքնատիպ միջոց, Ծահամիրյանը անվերապահորեն պահանջում էր նաև, որ օրենքի առաջ բոլորը լինեն հավասար:

«Որոգայթ փառացը» այսօր էլ արժեքավոր և ընդորինակելի է սկզբունքների էության և հարցադրությունների ընդգրկման առումով: Անդրադառնալով ժողովրդի հշխանության, իրավունքի գերակայության, ներկայացուցական ժողովրդավարության, հշխանությունների տարանջատման, սոցիալական պաշտպանվածության, սահմանադրական արդարադատության սկզբունքներին, առաջին անգամ հայ իրականության մեջ ներկայացված է պետական (սահմանադրական) իրավունքի նորմերի ամբողջական ու կանոնակարգված համակարգը՝ ոչ միայն ընդհանրացնելով հայ և համաշխարհային հասարակական մտքի նվաճումները, այլև պետական նոր մտածողության սկիզբը դնելով՝ դարձավ միջազգային սահմանադրական զարգացումների անկյունաբարարային արժեքներից մեկը:

Հայ սահմանադրականության նվաճումներից է նաև արևմտահայերի «Ազգային Սահմանադրությունը»:

ՄԵՍՐՈՒԹ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

«Ազգային Սահմանադրության» հեղինակները Եվրոպայից վերադարձած, ֆրանսիական 1848թ. հեղափոխության ավազանում մկրտված, բուրժուական առաջավոր մտածողների գաղափարներին հաղորդակից մի շարք հայ մտավորականներ էին [18]: Վերադարձանալով Կ. Պոլիս տեղի դեմնկրատական ուժերի հետ ծրագրեցին առանց արյունահեղության ազգի ներքին գործերի կառավարման նեկար վերցնել իրենց ձեռքը:

1860 թվականի մայիսի 24-ին Ազգային ժողովն ընդունեց ու հաստատեց կանոնադրությունը, որը Ն. Ռուսինյանի առաջարկով անվանվեց «Ազգային սահմանադրություն»: Սակայն Ազգային սահմանադրությունը գործադրության մեջ կարող էր որպես թուրքական կառավարության վավերացումից հետո միայն: Եվ վերջապես 1863թ. մարտի 17-ին բազմաթիվ վերափոխումներից հետո Բարձր Դուռը (Թուրքիայի կառավարությունը) հաստատում է «Ազգային սահմանադրությունը»[19]:

Ազգային սահմանադրությունը նոր և առաջադեմ երևույթ էր արևմտահայ կյանքում: Նպատակն էր ավելի ժողովրդավարական հիմքի վրա դնել Կ. Պոլիսի պատրիարքարանի գործունեությունը, կարգավորել Օսմանյան պետության և արևմտահայության փոխհարաբերությունները:

Օսմանյան կառավարությունն ամեն կերպ խոչընդոտել է Ազգային սահմանադրության կիրառմանը, իսկ 1896-ին Արդուլ Համիդ II-ը նույնիսկ արգելել է այն:

Մեծի Տան Կիլիկիո կաթողիկոսության 1992-ին ընդունված կանոնադրության մեջ ուղակիրեն նշված է, որ վերջինիս հիմքը Ազգային սահմանադրությունն է՝ »իր ոգով և էական սկզբունքներով«: [20]

Ազգային սահմանադրությունը, անշուշտ, դրական դեր է խաղացել թուրքահայոց կյանքում: Սակայն իրադարձությունների հետագա ընթացքը, հասկանալի է, պայմանավորված էր բազում գործուներով:

Հայ սահմանադրական միտքն ինքնատիպ զարգացում ունեցավ Հայաստանի առաջին և երկրորդ (խորհրդային) հանրապետությունների ժամանակաշրջանում:

Հայաստանի առաջին հանրապետության կազմավորմաբ սկսվում է ծևակորվել նաև հայոց անկախ պատականության ազգային օրենսդրությունը:

Քաղաքական բարդ իրադրությունների շրջանում ընդամենը երկուսուկես տարի գոյություն ունեցավ Հայաստանի առաջին հանրապետությունը, որն ըստ կառավարման ծեփ՝ պառամենտական հանրապետություն էր: Երկրի օրենսդիր մարմինը համարվում էր Հայաստանի պարլամենտը, իսկ գործադիր իշխանությունը իրականացնում էր կառավարությունը, որը հաշվետու էր պարլամենտի արջը:

Հանրապետության գոյության երկուսուկես տարվա ընթացքում ընդունվեց 1203 օրենք, որոնցից 290-ը պարլամենտի կողմից, 913-ը՝ կառավարության: Հանրապետության կառավարությունն օժտված էր պատվիրակված օրենսդրության լիազորությամբ: [22]

Հայաստանի առաջին հանրապետությունը չհասցեց իր սահմանադրությունն ունենալ, չնայած որոշում էր կայացվել սահմանադիր ժողովի գումարման մասին:

1920 թվականի վերջին Հայաստանում հաստատվեց խորհրդային իշխանություն, երկու տարի անց 1922թ. փետրվարի 3-ին ընդունվեց Հայկական ԽՍՀ առաջին Սահմանադրությունը:

Սոցիալիստական Հայաստանի առաջին Սահմանադրությունը խորհրդական ծեփ կազմակերպեց հանրային քաղաքական իշխանությունը:

Օրենսդիր իշխանությունն իրականացվում էր միաժամանակ խորհրդական համագումարի, ԿԳԿ-ի (կենտրոնական գործադիր կոմիտե), ԿԳԿ Նախագահության և Հայաստանի ժողովրդական կոմիտարների խորհրդի կողմից:

ՄԵԽՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱԼԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Հայկական ԽՍՀ երկրորդ Սահմանադրությունն ընդունվեց 1937թ. մարտի 23-ին: ԽՍՀՄ 1936թ. Սահմանադրության ընդունումից անմիջապես իետո:

1978թ. ապրիլի 14-ին ընդունվեց Հայաստանի երրորդ Սահմանադրությունը, որը պարունակում էր ժողովրդավարական նորմեր:

ՀՀ պատմությամ ողջ ընթացքում առաջին անգամ 1995թ. հունիսի 5-ին անցկացվեց սահմանադրական հանրաքվե:

1995թ. հունիսի 5-ին ընդունվեց ՀՀ Սահմանադրությունը, որով ավարտվեց անկախ պետականության հաստատման գործընթացը, որի սկիզբը դրվել էր Հայաստանի անկախության մասին հոչակագրի ընդունմամբ:

Ետական իշխանության համակարգի հետագա կատարելագործման անհրաժեշտությունը, Եվրախորհրդին անդամակցելու առնչությամբ ստանձնած իրավական պարտավորությունները իրատապ դարձրին սահմանադրական բարեփոխումների անհրաժեշտությունը նախ և առաջ պայմանավորված էր նրանով, որ 1995թ. ՀՀ Սահմանադրությամբ հետևողականորեն իրացված չէր իշխանությունների տարանջատման սկզբունքը, անհրաժեշտ էր հավասարակշռել Նախագահ-Ազգային ժողով-կառավարություն-դատական իշխանություն փոխհարաբերությունները: Այս խնդիրների լուծման անհրաժեշտության արդյունք դարձավ 2005թ. նոյեմբերի 27-ին ՀՀ-ում անցկացված սահմանադրական հանրաքվեն, որի ժամանակ ժողովուրդը կողմ քվեարկեց սահմանադրական բարեփոխված տարրերակին: Այդ հանրաքվեի արդյունքում 1995թ. Սահմանադրության ինը տասնյակից ավելի հոդվածներ ենթարկվեցին փոփոխությունների, իհմնական օրենքը լրացվեց 27 նոր հոդվածներով:

Մասնավորապես սահմանադրական փոփոխություններով նշանակալիրեն կրծատվեցին նախագահի լիազորությունները, իսկ Ազգային ժողովի դերը ընդլայնվեց:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանադրությունն ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին՝ համաժողովրդական հանրաքվեով (մասնակցել է գրանցված քաղաքացիների 87%-ը), Սահմանադրությանը կողմ է քվեարկել քվեարկածների 99,58%:

Այդ Սահմանադրությամբ ամրագրվել է հայկական երկրորդ հանրապետության կայացման իրավական փաստը: Խորհրդային իշխանության օրոք Ղարաբաղի տարածքում գործել է Աղբեջանական ԽՍՀ Սահմանադրությունը:

ԼՂՀ 2006 թվականի դեկտեմբերի 10-ի սահմանադրությունը կարևոր դեր խաղաց իմքնորոշված Արցախի պետականությունն ամրապնդելու, երկրում իրավական և ժողովրդավարական կարգեր հաստատելու գործում: Այն ապացուցել է իր կենսունակությունը և նպաստել սահմանադրա-իրավական մի շարք ինստիտուտների ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ ինքնիշխան, ժողովրդավարական և իրավական պետության կայացմանը:

Այնուամենայնիվ, թե ՀՀ Սահմանադրությունը և թե ԼՂՀ Սահմանադրությունը վերջին ժամանակահատվածում կարիք են զգացել սահմանադրական նորմերի իրավակարգավորումների հետագա բարելավման, ինչի կապակցությամբ 2015թ. դեկտեմբերի 6-ին ՀՀ Սահմանադրության մեջ հանրաքվեով կատարվել են փոփոխություններ:

ԼՂՀ Սահմանադրության մեջ ևս կատարվել են փոփոխություններ 2017թ. փետրվարի 20-ին:

Փոխվել են ՀՀ և ԼՂՀ կառավարման ծևերը:: Հայաստանը ընդունեց կառավարման խորհրդարանական ծևը:: Փոփոխություններ են կատարվել Նախագահի, վարչապետի կարգավիճակներում: Ավելացվել են սահմանադրության գլուխներ և հոդվածներ: Էլ ա-

ՄԵՄՐՈԴ ՄԱՀՏՈՅ ՀԱՍԱՍԱՐԱՆԻ ԼՐԱՏՈՒ 2018

Վեհի մեծ ուշադրություն է դարձվել մարդու և քաղաքացու իրավունքներին և ազատություններին, նրա սոցիալական պահանջմունքներին:

Ներկայիս Սահմանադրությունը բաղկացած է 16 գլուխներից և 220 հոդվածներից:

Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ կառավարման ծնք՝ կիսանախագահականից անցում է կատարվել նախագահական համակարգին: Երկրի նախագահը միաժամանակ դեկավարում է նաև գործադիր իշխանությունը: Այն ավելացել է 33 հոդվածներով, ինչը հարստացրել է Սահմանադրությունը: Այսպիսով՝ հայ իրավաստեղծ գործունեության և ազգային օրենսդրության զարգացման պատմական փորձը վկայում է, որ չնայած պետականության երկարատև բացակայությանը, այնուհանդերձ, աշխարհիկ և կանոնական իրավանորմերի ստեղծումը երբեք չի դադարել, դեռ ավելին այն շարունակվել է նաև հայկական զաղթօջախներում հարստացնելով ազգային իրավաստեղծ գործունեության փորձը, որն այսօր նորանկախ հայոց պետականության իրավունքի համակարգի ծնավորման համար ունի ինչպես տեսական ճանաչողական այնպես էլ որոշակի գործնական-կիրառական նշանակություն, որովհետև պատմությունը միայն անցյալ չէ, այլ դա նաև ներկա և ապագա սերունդների համար է:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Берман Г. Дж, Западная традиция права, эпоха формирования, Москва, 1964, էջ 370:
2. Մարդու և քաղաքացու իրավունքների ֆրանսիական հոչակագիր, 26 օգոստոսի 1789, հոդվ. 16:
3. «Հ Սահմանադրություն, Եր., 2015, հոդվ. 5, էջ 13:
4. Ներսեյանց Վ, Իրավունքի և պետության տեսություն, 2002, էջ 91:
5. Հարությունյան Գ., Սահմանադրությունից սահմանադրականություն, Եր., 2004, էջ 6:
6. Թանանյան Գ., Ազգային Սահմանադրություն Հայոց, 2012, էջ 1:
7. «Հ սահմանադրական իրավունք, Եր., 2008, էջ 66:
8. Նույն տեղում:
9. Սաֆարյան Գ., Խաչատրյան Հ., Հայ իրավունքի հուշարձաններ (V-XVIII դդ.), Եր., 1994, էջ 7:
10. Ղահրամանյան Կ., Հովհաննիսյան Վ, 1500-ամյա հայկական Սահմանադրությունը, Եր., 1999, էջ 3:
11. Այվազյան Ա.Ս, Սահմանադրության ծագման և էության վերաբերյալ մոտեցումներ հայ իրականության մեջ, «Իրավագիտական հարցեր», Եր., 2001, էջ 12:
12. «Հ սահմանադրական իրավունք, 2003, էջ 69:
13. Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից Աշխարհի, գրաբարից թարգմանությունը ՎարագԱռաքելյանի, Եր., 1999, էջ 66:
14. Ռոռզայք Փառաց, Եր., 2001, էջ 3:
15. Սաֆարյան Գ., Խաչատրյան Հ., Հայ իրավունքի հուշարձաններ (V-XVIII դդ.), Եր., 1994, էջ 24
16. «Օրենք և իրականություն», միջազգային իրավաբանական հանդես, Եր., էջ 12:
17. Լեռ, Երկերի ժողովածու, հ. 6, Եր., 1997, էջ 77:
18. Հայ ժողովրդի պատմություն, հ5, Հայաստանը 1801-1870 թվականներին, ակադեմիական հրատարակություն, Եր., 1974, էջ 335:

ՄԵՄՐՈՊ ՄԱՀԾՏՎԵ ՀԱՍԱՍՏԱՐԱՆԻ ՂՈՒՏՈՒ 2018

- 19.Հայ ժողովրդի պատմություն, հ5, Հայաստանը 1801-1870 թվականներին, ա-կադեմիական հրատարակություն, Եր., 1974, էջ 336:
- 20.Քրիստոնյա Հայաստանը, Եր., 2001, էջ 21:
- 21.Հայաստանի Հանրապետության օրենքները, 1918-19թթ., Եր., 1998, էջ 55, 269:

ԱՍՓՈՓԱԳԻՐ

**Հայ սահմանադրականության պատմական զարգացման հիմնական ուղենիշները
Գրիգորյան Հասմիկ**

Հայ իրականության մեջ սահմանադրական միտքը ձևավորվել է 18-րդ դարում, սակայն նրա ակունքները հասնում են 4-5-րդ դդ. Իր յուրահատկությամբ առանձնանում է 5-րդ դարի հայոց արքա Վաչագան թագավորի «Կանոնական սահմանադրությունը»: Հայ սահմանադրականությունը մի նոր աստիճանի հասավ Շ. Չահամիրյանի կողմից: Մեծ դեր խաղաց նաև արևմտահայերի «Ազգային Սահմանադրությունը»: Հայաստանի խորհրդային հանրապետությունը ընդունեց երեք սահմանադրություններ: Հայաստանի անկախ երրորդ հանրապետությունը ընդունեց սահմանադրություն 1995թ. հուլիսի 5-ին հանրաքվեով: Արցախի հանրապետության Սահմանադրությունը ընդունվել է 2006թ. դեկտեմբերի 10-ին: Հայ սահմանադրականությունը երկար ճանապարհ է անցել և մեծ դեր կատարել պետականության կերտման և պահպանման գործում:

РЕЗЮМЕ

Основные вехи исторического развития армянской конституциональности
Григорян Асмик

Ключевые слова: конституция, конституциональность, демократия, национальный, справедливость, власть, правовое государство.

В армянской действительности конституциональная мысль формировалась в основном в XVIII веке, но ее источники датируются IV-V веками. Своей своеобразностью отличались «Каноническая конституция» армянского царя Вачагана. Конституционная практика развивалась и достигла новой ступени благодаря Ш.Шамиряну. Большую роль сыграла также «Национальная конституция» западных армян. В советские годы в Армении были приняты три конституции. Независимая Республика Армения приняла свою конституцию 5-го июля 1995 года. В Республике Арцах приняли Конституцию 10 декабря 2006 года. Все эти конституции сыграли большую роль в развитии и укреплении армянской государственности.

SUMMARY

The main milestones of the Armenian Constitutionality historical development
Hasmik Grigoryan

Key words: *Constitution, Constitutionality, democracy, national, justice, power, low-governed state*

In fact, the Armenian constitutional idea was formed mainly in the eighteenth century, but its sources date back to IV-V centuries. Its originality had the "Canonical Constitution" by the Armenian king Vachagan. Constitutional practice has developed and reached a new level due to the activity of Sh. Samaranch. The larger role was played by the "National Constitution" of Western Armenians.

In the Soviet years, Armenia has had three constitutions. Independent Republic of Armenia adopted its Constitution on 5 July 1995. The Republic of Artsakh adopted the Constitution on 10 December. All these constitutions have played an important role in the development and strengthening of the Armenian statehood.